


L. ԱՐԻՍՅԱՆ

ՄԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

••••••••••



ՊԵՏՎՐԱԾ

19 NOV 2011



891.93.09

4 - 87.

Լ. ԱՐԻՍՅԱՆ

ՄԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՄԻՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

ՅԵԼՈՒՅԹ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐՈՂՆԵՐԻ
ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

ԳԵՏԱԿՈՆ ՀՐԱՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1934

22.02.2013

60-120

Ընկերներ, մեր համագումարը մի
մեծ զեմոնստրացիա յեր այն զորեղ
տճի, վոր ունի մեր գրականությու-
նը Խորհրդային Միության և, նրա-
արևելքի ավանդուսար հանդիսացող,
Խորհրդային Հայաստանի Հաղթա-
կան սոցիալիստական շինարարու-
թյան հիման վրա:

Հայաստանի խորհրդային գյող-
ների առաջին համագումարը ցույց
տվեց, վոր մեր գրողները, մեր գր-
րական Փրոնտի աշխատողները,
լուրջ կերպով են մտածել Հայկու-
կուսի կենտկոմի հունիսի 14-ի վո-
րոշման մասին, վորտեղ մատնանըշ-
ված են մեր գրողների միության



59553-66

Գետհամի տպաքան
Գլավ. 8690, հրամ. 4023, տիր. 3000, պատ. 1867

ու առանձին գրողների կատարած
սխալները և գծված ե այն ուղին,
վորով պետք ե ընթանա հետազոտ
աշխատանքը մեր գրական ֆրոն-
տում : Համագումարը ցույց տվեց,
վոր ընկերներն, ընդհանուր առ-
մամբ, ցանկանում են ըրջադարձ
կատարել վոչ միայն խոսքով, այլև
գործով, աշխատում են վճռականա-
պես վերջ տալ այն խմբակային
պայքարին, վորը մինչև վերջին
ժամանակները, աել ե գտել գրող-
ների շարքերում : Այստեղ յելույթ
ունեցող բոլոր ընկերները չետեցին
խմբակային պայքարի մեծ վնասնե-
րը մեր խորհրդային գրողների ու
միության աշխատանքների համար :

Թեև չի կարելի ասել, վոր խմբա-
կայնության ելեմենտները վերջնա-

կանապես հաղթահարված են գրող-
ների շարքերում (համագումարում
ևս խմբակայնության վորոշ ելե-
մենտներ յերեան յեկան), այնուա-
մենայնիվ համագումարում, ինչ-
պես և համագումարից առաջ, բոլ-
շևիկյան ինքնաքննադատությամբ
հանդես յեկան մի շարք ընկերներ
(ընկ. ընկ. Ն. Զարյանը, Ա. Բա-
կունցը, Վ. Հոռունին և ուրիշները),
ինքնաքննադատության լուրջ փորձ
կատարեցին Զարենցը և ուրիշնե-
րը՝ վորոնք, այս կամ այն հաջո-
դությամբ, փորձեցին կոնկրետ վեր
լուծության ու ինքնաքննադատու-
թյան յենթարկել իրենց ստեղծա-
գործություններում կատարած ըս-
կզբունքային սխալները : Անկաս-
կած, այդ ընկերները սկսում են

հասկանալ, վոր յերկարատե այն
խմբակային պայքարը, վոր նրանք
տանում եյին հանուն իրենց նացիո-
նալիստական կամ «ձախ» ՌԱՊՊ-ա-
կան սկզբունքների, ջուր և լցնում
մեր դասակարգային թշնամիների
ջրաղացին և իջեցնում ե մեր գրա-
կանության զարգացման տեմպերն
ու վորակը:

Ցես արդեն ասացի, վոր համա-
գումարում դեռ ելի արտահայտու-
թյուն գտան խմբակայնության վո-
րոչ տրամադրություններ: Այս ա-
ռընչությամբ չի կարելի կանգ չառ-
նել Մկրտիչ Արմենի վարքագծի
վրա:

Ընկեր Արմենը յերկար ժամանակ
ակտիվութեն մասնակցել ե խմբակա-
յին պայքարին, լինելով Զարենցի

խմբակի ակտիվ անդամներից մեկը:
Այդ խմբակը, ինչպես այդ բազմիցու
անդամ նշվել ե պաշտոնական գո-
կութենալուներում, արտահայտել ե
մեր զրականության մեջ նացիոնա-
լիստական, նացիոնալ-դեմոկրատա-
կան ահնդենցներ: Ընկ Արմենն իր
ախրահնչակ հոգվածում ձևակեր-
պել ե «ազգային ձևերի խոսցման»
նացիոնալիստական «թերք» և տուրք
ե տվել իր ատեղծագործության մեջ
հետադիմական տենդենցներին: Ի՞նչ
եր սպասում համագումարը նրա-
նից: Համագումարն սպասում եր,
վոր նա այս ամբոխից պետք ե դո-
նե ազնիվ փորձ կատարել իր սը-
խալները քննադատելու, նա պետք է
լծվեր, ըստ իր ուժերի ու ըմբըռ-
նողության, այս համագումարում

ծավալված բոլշևիկյան ինքնաքննա-
դատությանը։ Սակայն ընկ. Արմե-
նը դրա փոխարեն հայտնաբերեց
բուհեմական վերաբերմունք համա-
գումարի նկատմամբ։ Նա նախ մի
հայտարարություն հանձնեց համա-
գումարի նախագահությանը, վորով
նա իր «զայրույթն» ե արտահայ-
տում այն առթիվ, վոր իբր թե զե-
կուցողները թերագնահատել են իր
«խոշոր դերը» մեր գրականության
մեջ և վերադարձնում ե համագու-
մարին իր մանդատը։ Ապա, հա-
ջորդ որը, նա ներկայացնում ե մի
նոր ծավալուն հայտարարություն,
վորանդ նա մանրամասնորեն գո-
վում ե իր «ստեղծագործական ար-
ժանիքները»։ Նա յե յեղել, իբր թե,
այն միակ գրողը, վորը, «զբաղվե-

լով կոմյերիտական թեմաներով՝
վեր հանեց մեր կոմյերիտմիության
պայքարի և աշխատանքի մի վողջ
ետապ», կամ վոր իր «Յերևան» ե-
պողեան, գրում ե նա առանց հա-
մեսության նշույլի անդամ—«հան
դիսանում և մեր գրականության
ամենալավագույն և մնայուն գրքե-
րից մեկը, մի գիրք, վորն իր մեջ
ունի ձեւական այնպիսի նվաճում-
ներ, վորոնք նրան գարձնում են
համամիութենական արժեքի գործ»
և այլն և այլն։

Այս բոլորից հետո, նա մի յեր-
բորդ դիմումով հայտարարում ե,
վոր իր և համագումարի միջի տե-
ղի ունեցած միջադեպը «վերացված
և համարում»։ Յեվ յերբ նը-
րան խոսք են տալիս, նա, փոխա-

նակ դուրս գալու ստեղծագործական ինքնաքննադատությամբ, ոկրում և կվաղի «ղեկավարի» տոնով ուսուցանել համադումարին:

Յես կանդ չեյի առնի այսքան մանրամասն ընկ. Արմենի վարքի վրա, յեթե միայն ընկ. Արմենը չի մեր մեր չնորհալի յերիտասարդ պրողներից մեկը և նրա բոհեմական, խորհրդային գրողին անվայել տրամադրությունները, վորոշ չափով բնորոշիչ ըլինեյին այն մի շարք անթույլատրելի յերևույթների համար, վորոնք, դժբախտաբար, վերջին ժամանակներս տեղ եյին գտել մեր մի շարք լավագույն զբողների մոտ: Նման յերեսույթների գեմ խորհրդային գրողները պետք ե ամենալինական պայքար մղեն, վորով-

հետեւ նրանք ստորացնում են մեր գրականությունը, խանդարում են մեր գրականության վորակական աճին, նոր գրական կազրեր պատրաստելու դործին:

Պետք ե ասել, վոր այդ անհանդուրժողականությունը, վորը ցուցաբերեցին Արմենը և մի շարք ուրիշներներ մեր համագումարում ինքնաքննադատականության հանդեպ, միանդամայն անթույլատրելի և վնասակար յերեսույթ և մեր խորհրդային գրականության համար:

Բոլշեիկյան ինքնաքննադատությունը մեր գրականության, ինչպես նաև սոցիալիստական չինարարության այլ ասպարեզների համար բացարձակ անհրաժեշտառնություն և ներկայացնում: Առանց ինքնաքնն-

նաղատության ու քննադատության
մեր գրականությունը չի կարող
զարգանալ, չի կարող թոթափել իր
վրայից անցյալի փոշու մնացորդ-
ները։ Առանց ծավալուն ինքնաքըն-
նաղատության մենք չենք կարող
աճեցնել իսկական, խոշոր խորհըր-
դային գրողներ, չենք կարող հաջող
պայքար մղել մեր գրականության
իզեական ու գեղարվեստական մա-
կարդակի հարածուն վերելքի հա-
մար։

Համապումարը ցույց տվեց, վոր
մեր գրողներն ունեն հոկայական հա-
ջողություններ, այնպիսի հաջողու-
թյուններ, վորոնք անհնար ե չափեւ
մեր հին գրականության չափերով.
այս մասին բավական մանրամասնո-
րեն խոսվեց համապումարին ներկա-

յացված զեկուցումների մեջ։ Այս իսկ
պատճառով յես կանգ չեմ առնի այդ
խնդրի վրա, միայն կուզենայի իրոք
նմուշ մեր գրականության հաջողու-
թյունների, հիշատակել ընկ. Զանանի
«Եահնամե» պիեսը, վորն արժանա-
ցավ համամիութենական բարձր զնա-
հատականի և վորի մասին դժբախ-
տաբար, այստեղ համարյա թե խոսք
չեղավ։

Յես կանգ կառնեմ համապումա-
րում արծարծված մեր գրականու-
թյան մի շարք ակտուալ խնդիրների
վրա։

* * *

Հայոնի յե և բազմիցս անդամ աս-
ված, վոր չնայած մեր գրականու-
թյան հոկայական հաջողություննե-

րին, նա, այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ, հետ և մնում մեր յերկ բի ոսցիալիստական շինարարության աճող թափերից։ Սակայն սա զեռ բոլորը չե, վորովհետեւ մեր աճող սոցիալիստական կյանքից հետ մնալու այս ընդհանուր գնահատականը բնորոշ և միութենական ամբողջ խորհրդային գրականության համար։

Պետք է անմիերապահորեն ասել, վոր մեր գրականությունը հետ և մրնում թուսաստանի խորհրդային գրականությունից։ Այս հանդամանքը պետք է պարզ լինի մեզ բոլորին համար։ Մինչդեռ մեր մի շարք ընկերների մեջ այն մտայնությունը կա, վոր իբր թե մեր գրողների խոչոր մասը կանգնած և Խորհրդային Միության գրամիանության ամենաարարձը գիրքե-

րում։ Սակայն դժվար չե հասկանալ, վոր այս մտայնությունն արգասիք և նեղ ազգայնական տրամադրությունների, և իրքեւ արդպիսին, նա խոչոր միաս և բերում մեր գրականության իդեալական ու գեղարվինական աճին։

Հայաստանի խորհրդային զրոյները պարտավոր են ամենավճռական պայքար ծավալել նման տրամադրությունների վեմ, վորովհետեւ նրանք (այդ տրամադրությունները) ցածրացնում են մեր գրականության մակարդակը, խանդարում են գրական կադրեր աճեցնելու գործին, արգելք են հանդիսանում գրողների շարքերում բուելիկյան ինքնաքննադատության ծավալմանը և խանդարում են նրանց՝ կենարոնացնելու իրենց ուշադրությունն ու ջանքերն այն հրո-

59553-66



կայական ստեղծագործական խընդիմությունների վրա, վորոնք այժմս դրված են խորհրդային գրականության առաջ: Ճիշտ ե, վոր մենք կարող ենք, պետք ե վոր հասնենք և կհասնենք խորհրդային գրականության բարձրագույն դիրքերին, բայց դրա համար անհրաժեշտ ե, վոր մեր գրողները, մանավանդ մեր գրականության յերիտասարդ կատրերը, յերկարատեղ ու համառ աշխատանք կատարեն, սովորեն, դրա համար անհրաժեշտ ե, վոր մեր գրողները, առաջին հերթին, ազատագրվեն այդ վոչ մի հիմք չունեցող ազգայնական սնապարծության տրամադրություններից: Մեր գրականությունը գեռ շատ բան ունի սովորելու ուկրաինական, բելոռուսական և Միության մյուս ժողովուրդ-

ների գրականություններից: Առանձնապես կարեվոր ե նշել, վոր մեր գրականությունը գեռակա հետ ե մնում խորհրդային գրականության առաջավոր ջոկատը հանդիսացող— ուստական գրականությունից: Ռուսական խորհրդային գրականությունից սովորելը, դա մեր հիմնական խնդիրներից մեկն ե և յեթե մեր խորհրդային գրողները համակվեն այդ գիտակցությամբ, անկասկած պատմականորեն համեմատաբար կարճ ժամանակամիջոցում մեղ կհաջողվի լիկվիդացիայի յենթարկել մեր հետամնացությունը և խկապես հասնել խորհրդային գրականության բարձունքներին:

* * *

Զարգացման ավագալ ըրջանում մեր գրականության ակտուալ խնդիրների

մասին խոսելիս, պետք է յելնել այն
հիմնական պահանջման, վորն առաջա-
դրված է Կենտրոնական Կոմիտեյի
հուլիսի 14-ի Հայանի բանաձևում։
Դա այն է, վոր մեր գրողները պետք
է վճռական հականարված տան մեր
գրականության ասպարիզում տեղ գր
տած մի շարք խորթ, մեզ թշնամի և
մեր գրականության ստեղծագործա-
կան վորակը ցածրացնող տենդենցնե-
րին։ Առաջին հերթին նրանք պայքար
պետք է ծավալին հայկական նացիո-
նակիզմի դեմ, վորի արտահայտու-
թյունները, վերջին ժամանակներում,
չնորհիվ մեզ մոռ տեղի ունեցած գա-
սակարգային պայքարի վորոշ որման,
բավականին աշխատացան և վորը
մեր պայմաններում, ավյալ հաս-
պում, զիփավոր վտանգ է հանդիսա-

նում աղբային-կուլտուրական շինա-
րարության ասպարիզում։ Պետք է
նշել, վոր մեր մի քանի ականավոր
գրողների վերջին մի շարք աշխատու-
թյուններում տեղ են գտել այդ մեղ
թշնամի իդեոլոգիայի արտահարքու-
թյունները։ Կենակոմի վերոհիշյալ
վորաչումից հետո նրանցից վոմանք
ընդունել են իրենց նացիոնալիստա-
կան սիալներն այս կտմ այն չափով։
Ընկ. Բակունցն, ինչպես ասացի, հա-
մագումարից առաջ կարգացած իր
զեկուցման մեջ ամենից ավելի ծավա-
լուն ստեղծագործական ինքնաքննա-
դատության վործ կատարեց իր և իր
ընկերների նացիոնալիստական սիալ-
ները մերկացնելու և հաղթահարելու
ուղղությամբ։

Համագումարում նա գուրու յեկավ

իր կատարած նացիոնալիստական սրբազները լիովին բնդունելով և այդ հանգամանքը, անշուշտ, զրավական և հանդիսանում այն բանի, վոր նու այսուհետեւ վճռական պայքար պիտի մզի մեր գրականության իղեյական անազարտության համար։ Չորենցը, Թոթովենցը և ուրիշները համագումարի ամբոխնից նույնպես հայտարարեցին, վոր ընդունում են իրենց աշխատություններից մի քանի սույն անցկացրած մի շարք նացիոնալիստական և նացիոնալ-գեմոկրատական դրույթների սխալ և անընդունելի լի լինելը։ Զնայած Թոթովենցի առաջին յելույթը, ինչես նաև Զարենցի բովանդակալից յելույթը այս համագումարում, վոչ մի զեպքում չի կարելի բավարար համարել,

այսուամենայնիվ, յես կարծում եմ, վոր համագումարի կարծիքն արտահայտած կլինեմ, յեթե ասեմ, վոր մեր խորհրդային գրողների ամբողջ կողեկանիվի և, առաջին հեղթին, կոմունիստ գրողների ընկերական սժանդակությամբ և բոլշեվիկյան ինքնարքնազատության հիման վրա հիշյալ գրողները կկարողանան ավելի խորն ըմբռնել իրենց կատարած նացիոնալիստական սխալները և չեն թույլ տա, վորպեսզի իրենց ստեղծագործությունը դառնա մեղթչնամի, հայկական նացիոնալիզմի իդեոլոգիայի ոռւպորը։

* *

Մյուս խնդիրը, վորի վրա յես կը ցանկանայի կանգ առնել, դա հետեւ

յալն եւ մեր խորհրդային գրողները
պետք եւ ել ավելի ակտիվորեն մաս-
նակցեն այն հերոսական պայքարին,
վորը տանում են մեր բանվորներն ու
կոլտողները, բոլշևիկյան կուսակ
ցության զեկալարությամբ, Հանուն
կապիտալիզմի մնացորդների վերջ-
նական վոչնչացման, Հանուն կոմու-
նիզմի վերջնական հաղթանակի:

Մեր գրողները պետք եւ ավելի սեր-
տորեն կապվեն մեր սոցիալիստական
շինարարության «առողջային»: Այս
առթիվ մի յերկու խոսք գեղարվես-
տական գրականության թեմատիկայի
մասին: Մի չարք ընկերներ այն միտ-
քը զարգացրին, վոր իբր թե թեմա-
տիկայի հարցը սկզբունքային հարց
չեւ և վոր ընդհանրապես մեր գրակա-
կանության համար թեմատիկայի

պրոբլեմ գոյություն չունի, վորով-
հետեւ, ասում են այդ ընկերները, ին-
չի մասին ուզում ես՝ գրիք, միայն
թե այն իդեոլոգիան, վորը դու անց
ես կացնում աշխատությանդ մեջ, լի-
նի պրոլետարական, սոցիալիստա-
կան: Պետք եւ ասել, վոր սա միակող-
մանի ու սիսալ գրույթ ե: Ընդհակա-
ռակը, իրիշվ ընդհանուր սկզբունք
պետք եւ պարզորչ կերպով շեշտվի,
վոր մեր գրականությունը պետք
եւ սերտորեն կապվի մեր իրա-
կանության հետ և առաջին հերթին
գեղարվեստականորեն վերաբռնագրի
այդ իրականությունը, սոցիալիստա-
կան շինարարությունը: Ի հարկե, ի-
րավացի յեր Զարենցը, յերբ նա խո-
ռում եր մեր գրողների և գրականու-
թյան ընդգրկած թեմաների ու իդեա-

Ների հորիզոնի ընդլայնման անհրաժեշտության մասին, սակայն նա միանգամայն սխալ ու անընդունելի ձեվով եր դնում հարցը, յերբ հակադրում եր մեր սոցիալիստական շինարարության առողջայի թեմատիկան լայն պատմական իդեաներին։ Նա մեր լեզվով չեր խոսում, յերբ ասում եր, թե իրը, մեծ վարպետություն պետք չե կոլխոզի աղջիկը կամ Ադրբեջանը գովելու համար։ Այս դրույթը մերը չե ի հարկե, և մեր գծի հետ վոչ մի առընչություն չունի։ Մեր դրոշները, իհարկե, պետք ե լայնացնեն իրենց ստեղծագործության, մշակվող իդեաների դիալգալոնը։ Մեր դրականությունը պետք ե արտացոլի միջազգային պրոլետարիատի և կեղեքիող աշխատավորության հեղափոխական

պայքարի ու ստեղծագործության բոլոր կողմերը։ Նա պետք է զբաղվի պատմական, գիտական, փիլիսոփայական և ուրիշ մեծ խնդիրներով։ Նա պետք է գեղարվեստականորեն նկարագրի կենդանի մարդկանց կենդանի հույցերը, վերջապես նա պետք է գեղարվեստականորեն նկարագրի բնության հրաշալիքները նրա տարրերը՝ նրա բազմելանդ հրապուրիչ ուժն ու մարդկության հերոսական աշխատանքն այդ տարրերքների հպատակեցման ու ոգտագործման համար ամբողջ պատմության ընթացքում։ Սակայն այդ բոլորի միջով, կարմիր թելի նման պետք ե անցնի մեր դրականության խոշորագույն ու հիմնական պատմական խնդիրը՝ սոցիալիստական շի-

նարարության գեղարվեստական արտացոլումը, գեղարվեստական նըկարագիրն այն հերոսական պայքարի, վորը մղում են մեր բանվորներն ու կոլխոզնիկները, Լենինյան կոստակցության գեկավարությամբ, իրենց շրջապատն ու ինքոփնքը կոմունիզմի վոզով վերամշակելու համար: Այդ անհրաժեշտ ե վոչ միայն մեր մասսաների կոմունիստական վերադաստիարակման պահանջների տեսակետից, այլ նաև այն պարտականությունների տեսակետից, վոր ունի մեր գրականությունը միջազգային պրոլետարիատի առաջ՝ մեր պայքարի ու շինարարության փորձը նրանց փոխանցելու տեսակետից: Մեր սոցիալիստական շինարարությանը հերոսարար լծված, ուրախոր ստրկությունից աղատա-

գրված մասսաների ստեղծագործական պոտենցիաների բազմերանգ գըր սեփորումը, նրանց հերոսական պայքարն իսկապես գեղարվեստականութեն (վոչ մակերեսային) վերարտադրելին ամենաղժվար, ամենաբարդ ու ամենաբարձր խնդիրն ե մեր գրականության համար, վորը պահանջում ե ստեղծագործական շատ ավելի մեծ կուլտուրա, քան «ընդհանուր» արարական խնդիրների մասին դրիւթ: Խնդիրն այն ե, վոր մեր գրականությունը կարողանա գեղարվեստութեն վեր հանել և մասսաներին ըմբռունելի ձեվով շարադրել մեր հեղափոխական առորյայի համաշխարհային պատմական եյությունը: Խնդիրն այն ե, վոր մեր գրականությունը կառողա վարակել սոցիալիզմ կառու-

ցող մասսաներին գիտակեց ենտու-
զիալմով, անհուն անձնվիրությամբ,
այդ խոշորագույն պատմական խըն-
դիրները լուծելու համար մղվող պայ
քարում :

Վորակեսդիմերը կարողա-
նան այդ մեծագույն խնդիրներն իրա-
գործել, նրանք պետք է լուրջ կերպով
դնեն մեր գործնական աշխատանքների
հետ սերտորեն կապվելու և իրենց
սեփական ընդհանուր տեսական մա-
կարդակի բարձրացման հարցը : Հայտ
նի չե՞ , միթե, վոր այն գրողը, վորը
կյանքի հետ ծանոթանում ե միայն
զրքերի և լրագրերի միջոցով և դի-
տում ե այդ կանոքը միայն թղթե ակ-
նոցների միջոցով, չի կարող վոչ
մի արժեքավոր աշխատություն առալ.
Հայտնի չե՞ , միթե, վոր տգետ գրողն

ընդհանրապես գրող չե : Մինչզեռ,
պետք է խոստովանել, վոր մեր գրող-
ներից վոմանք, վոչ միայն ընդհանուր
կուլտուրական ցածր մակարդակի
վրա յեն կանգնած, այլ նաև չեն սո-
վորում, չեն ուզում սովորել : Սա մի-
անգամայն անթույլատրելի ու խոր-
հըրգային գրականության համար վլ-
տանգավոր յերկույթ ե , վորը պետք
է, վորքան կարելի յե շուտ, վերաց-
նել :

Մի յերկու ընկերներ այն միտքը
հայտնեցին, վոր իրը թե մեր գրող-
ները գեղարվեստական յերկեր տալու
համար կարեք չունեն գիտությանը
դիմելու, վոր իրը թե նրանք, ընդհա-
կառակը, պետք է գեկավարվեն այն
սկզբունքով, թե՝ «գեղարվեստը՝ ին-
քը տարերքն ե , հակառակ գիտությա-

նը՝ վորը գործ ունի բանականության հետ» (Թոթովենց)։ Յես կարծում եմ, վոր այս դրույթի հակամարքսիստական, կանոյան բնույթն ինքն ըստ ինքյան պարզ է։ Մեր գրականությունը, մեր գիտությունը վերծ են բուրժուական իդեոլոգիային հատուկ արդ հակավրումներից։ Սոցիալիստական ռեալիզմի մեթոդը, ընդհակառակը, պահանջում է, վորպեսզի գեղարվեստական յերկը կանգնած լինի ժամանակակից գիտության մակարդակի վրա, այլ կերպ նու չի կարող բարդ ու հակասություններով լի մեր ժամանակի ճշգրիտ, հեղափոխական պատկերակ։ Յեթե մենք վիմենք անցյալ պատմական շրջաններին, ապա կտեսնենք, վոր նաև անցյալի գեղարվեստի իսկական վարպետները իրենց

ստեղծագործության մեջ յերես չեն դարձրել գիտությունից։ Ո՞վ չգիտէ, վոր բուրժուական ռենեսանսի ամենաականալոր գեղարվեստագիտները, արձանագործները, նկարիչները, գրողները կանգնած եյին իրենց ժամանակի գիտության մակարդակի վրա, յուրջ ուսումնասիրում եյին իրենց ըստեղծագործության հետ առնչություն ունեցող գիտություններն ու հենվում եյին նրանց վրա։ Այս մասին շատ գեղեցիկ պատմում ե հայտնի խոալական վարպետ Բենվենուտոս Զելինին կամ հիշենք, թեկուզ, Միքելանջելոյին, Լեոնարդո վա Վինչենց և Շուռիչ ներին։ Կամ թե վերցնենք հանճարությոթեյին, վորի անմահ ստեղծագործությունը՝ ֆառւսոր, վոչ պահան շափով գիտական աշխատություն ե,

քան գեղարվեստական։ Այս տեսակետից ևս մեր զբողների սովորելու խընդիրը—կարևորագույն խնդիրներիցն է։ Մեր սոցիալիստական մեծ հայրենիքին, հաղթանակող սոցիալիզմին, այլի մեծ չափով քան յերբեք առաջարկեմ բուրժուական աշխարհին, պետք էն վոչ թե իրենց անհատական ինտուիցիայով առաջնորդվող տնայնագործ ու տնաբույս սահմանափակ գրողներ, այլ ժամանակակից գիտության բարձրության վրա կանգնած ու մարզսլենինյան աշխարհայացքով զինված, կուլտուրական գլուխողներ։

* * *

Յերկու խոսք մեր անցյալի կուլտուրական արժեքների ոգտագործման մա-

սին։ Մարքսը ուսուցանում է, վորյուրաքանչյուր սերունդ բարձրանում ե իր նախորդների ուսերի վրա և քննադատորնեն ողտաղործում ե այն ամեն դրականը, ինչ վոր ստեղծագործել են նրան նախորդող սերունդները։ Լենինը, պարզաբանելով ու զարգացնելով մարքսիզմի այդ կարևորագույն գրույթը, նշեց, վոր մենք պետք ե քրնագատորեն վերամշակենք և ոգտագործենք անցյալ կուլտուրայի հեղափոխական-գեմովկատական ելեմենտները։ Պարզ է, վոր այդ աշխատանքը, ինչպես նաև վորեկցե ուրիշ գործ, մենք կատարում ենք, յելնելով հեղափոխական պրոլետարական սկզբունքներից, պրոլետարական հեղափոխության շահերից։ Մինչեւ մեր քննադատներից մեկը, Սուրեն Հարություն

յանը ,վիճելով Վոսկերչյանի հետ ,այս
ամբիոնից առաջկում եր լենինիզմի
այս պարզ ու հիմնական դրույթի
դեմ , անելով զանազան «ակադեմիա-
կան» հակածառություններ , հայտարա-
րելով լենինյան այդ դրույթը «նեղ» ,
«ստամանափակ» և այլն և այլն :

Բայց ի՞նչպես կարող և մարքսիստ
քննադատն այդպիսի թեզով յերևան
գալ . մի թե պարզ չե լենինիզմի տար-
րական հիմունքներին ծանոթ յուրա-
քանչյուր ընկերոջ համար , վոր պրո-
լետարական շահերի տեսակետից նա-
յել անցյալի կուլտուրական արժեք-
ներին՝ նշանակում և ամենաբարձր-
մակումանի և խոր կերպով մոտենալ
այդ արժեքներին , դարձացնել և խո-
րացնել անցյալի հեղափոխական ելե-
մենտները սոցիալիստական կուլտու-

րայի ստեղծագործության ընթաց-
քում : ԶԵ՞ վոր դա մեր մեթոդորո-
դիայի յեթե վոչ ամենահիմնական ,
ապա չիմնական դրություններից մե-
կըն ե : Ասել , վոր դա «նեղ» , «սահ-
մանափակ» սկզբունք ե , միանդամայն
սխալ և ու անթույլարելի : Պետք ե
պահանջիլ , վոր այդ սկզբունքը կի-
րառվելիս չվերածվի պատմական
կոնկրետությունից մաքրված , անմիտ
ու անարդուն արսուրակցիայի : Սա
ճիշտ ե : Սակայն ասել , վոր այս սկզբ
բունքը «նեղ» ե , դա սխալ կլինի , դա
կնշանակի չհասկանալ և բուրժուա-
կան աղճամման յենթարկել մարք-
սիզմ-յենինիզմի հիմնական մեթոդո-
րական սկզբունք , դա կնշանա-
կի տուրք տալ մենշևիկյան որ-
յիկախիզիզմի տենդենցներին :

Այս առնչությամբ պետք է նշել, վոր գրաքննադատները, վորոնք հետ են մնում մեր գրականության ստեղծագործական մակարդակից, պետք է ամենալուրջ կերպով դնեն սեփական ուսման, Մարքոսի-Ենդելսի-Լենինի ու Ստալինի մեթոդովդիային հիմնավորապես (վոչ արսարակու ու ակադեմի կողմն) տիրապետական խնդիրը: Յեթև մենք նման պահանջ դնում ենք այսոր մեր գրողների առաջ, ապա նա անհամեմատ ալլելի մեծ կարևորություն եներկայացնում մեր քննադատության համար: Մինչդեռ պետք է վորոշակիորեն ընդգծել, վոր մեր գրաքննադատների մեծ մասը, վորոնց շարքերում դեռևս ապրում են ֆորմալիզմի, նացիոնալիստական իդեոլոգիայի ազգեցություններն ու ուսպ-

պական «ձախության» մնացորդները, —շատ քիչ են մտահոգված այս խընդիրներով:

Պետք է ասել, վոր մեր գրաքննադատությունը դեռ շատ թույլ ոգնություն է ցույց տալիս կուսակցությանը՝ նացիոնալիզմի ու այլ խորթ իդեոլոգիաների արտահայտությունները մերկացնելու գործում, այն ժամանակ, յերբ վերջին յերկու տարիներում, վերը մատնամշված պատճառների չնորհիվ, աշխուժացել են «ձախ» քյալագյողությունների ու հատկապես հայկական նացիոնալիզմի արտահայտությունները:—Վերցնենք, որինակի համար, Մարքոսիզմ-Լենինիզմի ինստիտուտի վերջերս լույս ընծայած «Գրականության պատմության» յերկրորդ հատորը, վորի մեջ աեղ են դը-

տել մի շարք լիբերալ ու մենչեվկյան
որդեկտիվիստական դրույթներ։ Հի-
շենք և այն զետքը, յերբ Պետհրատը
անցյալ տարի լույս ընծայեց հայկա-
կան դրականության պատմության
գասադիրքը, վորում տեղափորված
ելին հայկական բուրժուական նացիո-
նալիզմի, դաշնակցության կողմից
սնվող ու հրահրվող զողլոգիական նա-
ցիոնալիզմի, ամենամայտառակ նը-
մուշներ։ Այս տեսակետից պակաս նը-
շանակարգ չէ Մարքսիզմ-լենինիզմի
ինստիտուտում Խաչատուր Աբովյանի
անհետացման մասին Ակսել Բակուն-
ցի հրապարակած աշխատության
առթիվ։ Գրիգոր Զուբարի ար-
քած տիպահնչակ զեկուցումը, վորու-
թացարձակագես ուղղված եր մարք-
սիզմ-լենինիզմի հիմնական սկզբունք-

ների գեմ (Գրիգոր Զուբարը պահան-
ջում եր Խաչատուր Աբովյանին մոտե-
նալ վորակս «Հայկական կուլտուրա-
յի պատմության նոր եջ բաց անո-
ղի», վոչ թե քաղաքական,
գասակարգային այլ «Ընդհանուր
կուլտուրական արժեքավորման»
տեսակետից)։ Պարզ է, վոր
այդպիսի զեկուցում Մարքսիզմ-լենի-
նիզմի ինստիտուտում թույլ տալը,
ինչպիս և մեր քննադատության կող-
մից լուսնության մատնելը նշանակում
է, վոր գիտական աշխատանքով ու
գրաքննադատությամբ զբաղվող մի
շարք ընկերների մոտ պակասում և
անհրաժեշտ դասակարգային զգան-
ությունը։

Վերջնենք Բակունցի, Թութովենցի
հրատարակած աշխատությանները,

վորոնք մեր անցյալի առանձին խընդիրներին տալիս են աղջայնական, յերբեմն դաշնաւկցական (Թոթովենց «Կյանքը հին Հռովմեական ճանապարհի վրա») գունավորում ու բացատրություն։ Կամ Զարենցի այն առանձին կտորները, վորոնց մասին խոսեցին այստեղ ինչպես ինքը Զարենցը, նույնպես և ընկեր Խանջյանը։ Մի՞թե մեր գրաքըննազառությունը կանգնած է յեղելուառած բարձրության վրա մեր խորհրդակային գրողների առանձին աշխատություններում տեղ գտած այդ խորթի իդեոլոգիաների ազդեցությունները ժամանակին մերկացնելու գործում։ Իհարկե վո՛չ։ Այս յերկույթը վոչ պակաս չափով պետք է բացարեկ այն հանգամանքով, վոր մեր քըն-

նադատներից շատերն իրենք տառապում եյին մատնանշված «հիվանդություններով» և տուրք եյին տալիս ուսպալական «ճախության» մնացորդներին, վորոնք խանգարում եյին մեզ թշնամի այդ իդեոլոգիաների աղդեցությունների գեմ պայքարելու գործում։

Այս բոլորը ցույց ե տալիս, վոր մեր կուսակցության կենտկոմը հազար անգամ իրավացի յե, յերբ բարձիցս անդամ զգուշացնում ե մեր գրական կազմակերպություններին խորթի իդեոլոգիաների ազդեցությունների գեմ և պահանջում ե ուժեղացնել կրակը առանձնապես հայկական նացիոնալիզմի արտահայտությունների գեմ, վորը պայքարի տվյալ ետա-

սուռմ սոսանձնապես սուր վտանդ և
հանդիսամենում մեղ մոտ :

* * *

Վերջում մի քանի խոսք ել լեզվի
մասին : Համագումարում ամենահե-
տաքրքիր վիճարանություններ տեղի
ունեցան լեզվի հարցի չուրջը : Դա
ինքնին հասկանալի յե, վորովհետե
լեզուն մեր կուլտուրայի աղքային
ձեր (գոնե գրական ստեղծագործու-
թյան ասպարիվում) կարևորագույն
մոմենտ ե : Ընկերները ճիշտ նշեցին,
վոր մենք պետք ե ունենանք մի գրա-
կան լեզու, վորը հասկանալի լինի
տարբեր վայրերում ապրող և տարբեր
բարբառներ գործածող աշխատավո-
րությանը : Յեկ այլավոր լեզու մենք
ունենք—դա մեր յամանակակից գր-

րական լեզուն ե : Յես չեմ կարող հա-
մաձայնվել այն ընկերների հետ (Զա-
րենց և ուրիշները), վորոնք կարծում
են, թե լեզվի հասկանալիության իրն
գիրը սկզբունքային կարևորություն
չունի: Բակունցը միանգամայն ճիշտ
է գնում այս հարցը: Գրական լեզուն
պետք ե հասկանալի լինի բանվորա-
գյուղացիական մասսաներին, հակա-
ռակ գեղգում նա կդառնա հասարա-
կությունից կտրված, ինտելիգենցիա-
լի կաստայական լեզու: Ինարկե մեզ
մոտ, կուլտուրական հեղափոխու-
թյան պայմաններում պերը բանվորա-
գյուղացիական լայն մասսաները որի-
բավետում են գիտություններին ու
գեղարվեստին և կոմունիստական կու-
սակցության զեկավարությամբ կեր-
տում են նոր պրոլետարական, սոցիս

լիստական կուլտուրա—այդ անհնար
ու հետաղիմական ուսուպիս յէ : Մեր
գրական լեզուն պետք ե սնվի ժողո-
վրդական լեզվից . նա պետք ե խարսխ
ված լինի ժողովրդական լեզվի վրա ,
մեր առաջավոր բանվորների , առա-
ջավոր կոլտնտեսականների լեզ-
վի վրա : Ընդդժում եմ առաջա-
վոր բանվորների և առաջավոր
կոլտնտեսականների , վորովհետև նը-
րանք են առաջ տանում մեր կյանքը ,
մեր նոր կյանքի կերտումը : Նրանք
են , վոր իրենց աշխատանքի ու պայ-
քարի բովում ստեղծում են մեր նոր
լեզվի ակունքները : Մեր գրական լե-
զուն պետք ե զարդանա այնպես , վոր
տեղական բարբառները վերամշակվեն
նրա ազգեցության տակ : Յեվ իրոք
հենց այդպես ել լինում ե : Մեր կու-

տնտեսականն այսոր այնպես չի խո-
սում , ինչպես խոսում եր առաջվա-
ժեր գյուղացին : Հաճախ այնպիսի
տերմիններ , վորուց գեմ մեր շատ զը-
րականագետ ընկերները սիին են ճո-
ճում , մեր կոլտնտեսականների հա-
մար սովորական և գործածական են
դարձել : Վերցնենք հենց թեկուլ «յե-
լույթ» , «աշխոր» , «հարվածային» ,
ոռւսական «կոլխոզնիկ» , «պայոկ» ,
«կոմոմոմոլ» և ուրիշ նման բառեր ,
կամ «ոտար» տերմիններ՝ «դեկրետ» ,
«պլան» , «ցենտներ» ոռւսական «զա»
(«հեկտար»-ից) «մետր» և այլն , վո-
րոնք միայն մի քանի տարի յէ , ինչ
գործածության մեջ են մտել մեղ մոտ
բայց մեր աշխատավորական լայն
մասսաների համար արդեն սովորա-
կան ու հարադար են դարձել հակա-

ոակ մեր մի շարք գրականագետների
տեսակետի, ըստ վորոնց այդ բառե-
րը «ակադեմիկ» են կամ անբարեհըն-
չուն, վոչ բավականաչափ որիզինալ,
կամ ուղղակի «ուտար»։ Նշանակում ե
մեր գրական լեզուն, բարձր կանգնած
լինելով հանդերձ, պետք ե ըմբռնելի
և ընդունելի լինի բանվորների ու կոլ-
տնտեսական գյուղացիության համար
այլ կերպ նա կդառնա սխոլաստիկ,
վոչ կենդանի լեզու։ Իսկ այդպիսի լե-
զուն շատ հարմար միջոց ե հանդիսա-
նում պրոլետարիատին թշնամի, մաս-
նավորապես նացիոնալիստական իդեո-
լոգիայի ազդեցություններն անցկաց-
նելու համար։

Զարենցի «Դիրք ճանապարհի»-ն, —
վորի մեջ, ինչպես այդ ընդունեց նաև
ինքը հեղինակը, տեղ են գտել նացիո-

նալիստական տենդենցներ, —աչքի յե
ընկնում իր լեզվով, վորը տալիս և
մեզ մի տեսակ «մաքուր զտած հայե-
րեն», միանդամայն անընդունելի և
անհասկանալի մեր բանվորների ու
կոլտնտեսանկանների, մեր ժամանակա-
կից գրականության ու մասսայական
մամուլի համար։

Ապա չափաղանց կարևոր ե ընդգր-
ծել, վոր մեր գրական լեզուն սկսոք է
զարդանա Խորհրդային Միության
մյուս ժողովաւրդների լեզուների զար-
գացման հետ համընթաց, և առաջին
հերթին, ուստական նորագույն լեզ-
վի ազդեցությունը կրելով, այն լեզ-
վի, վորը մենք զտնում ենք լենինի ու
Ստալինի մոտ։ Մինչդեռ մեր թարգ-
մանիչներից ու հրատարակիչներից
վոմանք միանդամայն սխալ սկզբունք

են կիրառում այս խնդրում։ Որինակ՝
ընկ։ Ստալինի կուսակցության 17-րդ
համագումարում կարդացած զեկուց-
ման հայերեն թարգմանության առա-
ջին հրատարակության մեջ «ան-
դունդ» բառի փոխարեն գործ են ածել
«ասր ու ձոր» և այսպիսով թարգմա-
նությունը հետացրել են բնագրից։
Յեվ այդ արել են այն ժամանակ,
յերբ կա հատուկ հայկական բառ «ան-
դունդ», վորն ուղղակի համապատաս-
խանում ե ոուսական «որոպաշԵ» բա-
ռին։ Ինչոքես տեսնում ենք ընկերները
«հայացրել» են և թուլացրել ընկ։
Ստալինի վոճը, փոխանակ գիտակցա-
բար ոժանդակելու, վոր ընդհակառա-
կը, ընկ։ Ստալինի վոճը, նրա մտա-
ծելակերպն ու լեզուն ազդեն մեր ժա-
մանակակից հայերենի վրա, մեր

ժամաների լեզվի ու վոճի վրա։ Կեր-
տելով մեր ժամանակակից գրական
լեզուն, մենք պետք ե աչալուրջ հե-
տեվենք, վորպեսզի մեր լեզուն չը
պարփակվի ինքն իր մեջ, այլ իր զար-
գացման ընթացքում ընթանա այն ու-
ղիյով, ինչ ուղիով ընթանում ե Խոր-
հրդային Միության բազմազգի աշխա-
տավորության լեզվաշինարարական
աշխատանքը—սոցիալիստական վերա-
կառուցման ճանապարհով, որին տա-
ցիա ունենալով առաջին հերթին ժա-
մանակակից ոուսական լեզվի զար-
գացման հիմնական տեսլենցները,
հարմարեցնելով վերջիններս մեր լեզ-
վի առանձնահատկություններին։
Ապա, չի կարելի համաձայնվել Զա-
րենցի այն թեզիսի հետ, վոր իրը թէ
հեղափոխության ընթացքում լեզուն,

իբրև կուլտուրայի ազգային ձեւ, մը-
նում ե ըստ եյության նույնը, մինչ-
դեռ սկզբունքային փոփոխության ե
յենթարկվում կուլտուրայի բովան-
դակությունը: Իհարկե, լեզվի ու
կուլտուրայի բովանդակության
փոխարաբերություններն այստեղ
ևս մեխանիկական չեն: Բայց Զար-
բենցը տվյալ դեպքում աչքա-
թող ե անում, այն հանդամանքը, վոր
խոսելով մի եպօսայի կուլտուրայից
մյուսին անցնելու մասին, այն ել
բուրժուականից՝ պրոլետարականին,
սոցիալիստականին անցնելու մասին,
խոսելով մեղ մոտ կատարվող
կուլտուրական հեղափոխության
մասին, — չէ կարելի դործն այն-
պես պատկերացնել, վոր իբր թե
հեղափոխության ընթացքում լե-

զուն, իբրև կուլտուրայի աղ-
դային ձև, մնում ե ըստ եյության
անփոփոխ, ընդունելով իր մեջ նոր
կուլտուրական արժեքներ, նոր կուլ-
տուրական բովանդակություն: Բա-
վական ե ամենափոքր ակնարկ գցել
Առոհնդային Միության ժողովուրդ-
ների լեզուների զարգացման ընթացքի
վրա, վորպեսզի անվերապահորեն հա-
մոզվինք, վոր լեզուն ինքը հարստա-
նում ե ու եյական փոփոխություննե-
րի յենթարկվում ժողովրդական մաս-
աների գիտակցության հեղափոխա-
կան վերամշակման պրոցեսում: Լեզ-
վի այս տեսությունը, վոր Զարբենցը
համագումարում զարգացրեց, հան-
դիսանում ե թեորետիկական «իմնա-
վորումն «ազգային ձևերի խացման»
այն նացիոնալիստական թեզիսի, վո-

բըն առաջադրեց մի ժամանակ Զարենցի, Բակունցի և Արմենի խմբակը և վորն իր ժամանակին մերկացվել է կուսակցության կողմից։ Այս կարեւորագույն խնդրում ևս մենք պետք են պայքարենք ինչպես մեծապետական շոփին կոմիտ ու «Ճախ» ՌԱՊՊ-ական տենդենցիների գեմ, վորսնք անտեսում են մեր լեզվի սպեցիֆիկայի խնդիրները, նույնպես և հայկական նացիոնալիստական տենդենցիների գեմ, վորսնք քաշում են մեր կուլտուրական կյանքը դեպի ազգային ինքնամփոփումը, դեպի բուրժուական սեպարատիզմը։

Մեր գրականությունը, խորհրդային գրողները, կուսակցության և մեծ մեծ ուսուցիչ ու առաջնորդ ընկ. Ստալինի ոժանդակությամբ ու դեկա-

վարությամբ, արդեն ստեղծել են և ստեղծում են Հոկարական կուլտուրական արժեքներ։ Մեր խորհրդային գըրականությունը, Հակառակ մեռնող կապիտալիզմի իր անկումն ապրող Փաշիստական գրականությանը, ընթանում և անղաղաք վերելքի ուղիով, հաղթահարելով հին աշխարհի, կեղեքիչների կուլտուրայի ռեակցիան տրուտիցիաները և հանդիսանում է հաղթական պրոլետարական դիկտատորայի ամենաուժեղ զենքերից մեկը։

Հայաստանի խորհրդային գրականությունը, հաղթահարելով իր վերելքի դժվարությունները, պայքարելով թշնամի գաղափարախոսությունների ազդեցությունների գեմ, ինչպես «Ճախ» ՌԱՊՊ-ականության մնացորդների, նույնպես և մեր պայման-

ներում՝ տվյալ շրջանում առանձնապես սուր վտանգը ներկայացնող հայ կական նացիսնալիզմի դեմ, կղառնամարտնչող պրոլետարական ինտերնացիոնալիզմի հզորագույն դենքերից մեկն Անդրկովկասում, կուսակցության լավագույն դենքերից մեկը սոցիալիզմի վերջնական հաղթանակի իրազործման համար մզվող պայքարում :



63.128

ԳԻՒԸ 30 ԿՈՄ.

1
2

ՁԵՐ



Լ. Арисъян
О некоторых вопросах
нашей литературы

Գиз. ССР Армении, Эревань, 1934